

«Տէր Մարտիրոսի աներ երեցն վախճանեալ բերին յեկեղեցին (Ս. Գէորգ), ելաք ի վերայ» : — Դեկտ. 26. «Յերեկս գնացի Տէր Մարտիրոսենց սրահարցումն վասն աներոջն մահուան. Մխիթարն (Վրդ.)⁽¹⁾ եւս եւ կոմիտասն, եւ լաւ պատիւ» (Թղ. 240ա-բ) :

Ամդեցի դարձեալ իր Օրագրութեան մէջ, 1682 Ապրիլ 20ին, կը գրէ անոր մասին. «Օրս Քոմուրճի Տէր Մարտիրոսի օրդին Գէորքն որ ի շիլայեց ելաւ, մեզ շապիք, վարտիք եւ մահրամայ ողարկեց» (Թղ. 12բ) : Այս հաշուով Գէորգ քահանայ կը ձեռնադրուի քառասնեակ մը օրեր առաջ, որ կը հանդիպի նոյն տարուան Մարտ 12ին, մեծ պահոց Անառակի կիրակի օրը, իր հօր մահէն զրեթէ տարի մը վերջ, ու կը վերակոչուի անոր անունով Մարտիրոս : Ան գեռ եւ իր ձեռնադրութեան տարեկիցը չբոլորած՝ կը հետամտի աւագութեան ու կը բռնադատէ իր երէց եղբայրը՝ Նրեմիան որ գրէ Էջմիածին իր Գրիգորիս Վրդ. զաւկին ու անոր միջնորդութեամբ աւագութիւնն բերել տայ Եղիազար կաթողիկոսէն : Ուշագրաւ է Նրեմիայի այդ մասին առ Գրիգորիս Վրդ. գրած նամակը, ուր դառնապէս կը գանգատի իր Գէորգ (Տէր Մարտիրոս) եղբորմէն՝ ըսելով. «Ես իմ իւզովս ի տապակի տազնապիմ, սա թէ Գրեցեա խնդիր՝ թէ աւագութիւնս ի վեհէն զայցէ : Թո՛ղ թէ Գէորքն արաւ զիւր զամենայն, թամամ զիս ի նարզն իջեցոյց (նկուն ըրաւ), հիմա թէ Այլ զո՞վ ունիմ քան զքեզ, ասէ. որպէս Մաղաքիային թէ իմ միրասն քեզ կու հասնի, եւ զտունն ի կնկանն վերայ արաւ, որպէս թէ ցառլաթան (խաբեբայ) եւ այնաճի (խարդախ)՝ տուրլի մի խենթ. ապա զչըխարն (իր գործը) լաւ գիտէ : Հէլէ գրհովն մի Աստուած զիս

(1) Մխիթար Քիւրտիստանցի, ազա պատրիարք Կ. Պոլսոյ, 1700 :